

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

Ճանապարհային ոստիկանության վարչական տույժ նշանակելու մասին 10.05.2021թ. թիվ 2112707036 որոշման հիմքում դրված փաստական հանգամանքների դեմ բերված գանգատն առանց բավարարման թողնելու մասին

<< 01 >> 06 2021թ. 7-13 8866

ք. Երևան

Ճանապարհային ոստիկանության պետ, ոստիկանության գնդապետ Ե.Կարապետյանս, վերանայելով Հարություն Քախվեջյանի ՄԴ/43351-21 դիմումի քննարկման արդյունքում ստեղծված նյութերը՝

Պ Ա Ր Զ Ե Ց Ի

Քաղաքացի Հարություն Քախվեջյանը (**ծանուցման հասցե՝** քաղաք Երևան, Արաբկիր վարչական շրջան, Մ. Մանուշյան փողոց, 88-րդ տուն) դիմումով իր անհամաձայնությունն է հայտնել Ճանապարհային ոստիկանության վարչական տույժ նշանակելու մասին թիվ 2112707036 որոշմանը՝ նշելով, որ տվյալ հատվածը չի հանդիսանում խաչմերուկ:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 286-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Հարություն Քախվեջյանը ճանաչվել է որպես իրավախախտում կատարած անձ, ուստի նրա կողմից ներկայացված գանգատը ենթակա է քննության:

<<Տեսանկարահանող և լուսանկարահանող սարքերով հայտնաբերված ճանապարհային երթևեկության կանոնների խախտումների վերաբերյալ գործերով իրականացվող վարչական վարույթի առանձնահատկությունների մասին>> օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական վարույթի իրավախախտման հատկանիշների պարզման փուլում իրավախախտումը հիմնավորող ապացույցը իրավախախտումն ամրագրած տեսանյութն է կամ լուսանկարը որը պարունակում է նաև տեխնիկական միջոցով արձանագրված տվյալները: Ըստ նույն հոդվածի 2-րդ մասի՝ որպես իրավախախտումը հիմնավորող ապացույց վարչական կամ դատական կարգով բողոքարկման վարույթում կարող են օգտագործվել Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 251-րդ հոդվածով նախատեսված ապացույցները:

<<Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին>> օրենքի 2-րդ հոդվածի համաձայն՝ խաչմերուկը միևնույն մակարդակի վրա ճանապարհների հատման, միացման կամ անջատման տարածք է, ներառյալ՝ այդպիսի հատումով, միացումով, անջատումով առաջացած տարածքը, որը պայմանականորեն սահմանազատված է այդ ճանապարհների երթևեկելի մասերի հատման, միացման կամ անջատման տիրույթում առկա կորացումների համապատասխանաբար հակադիր սկզբնակետերը միացնող երևակայական գծերով:

<<Կառավարության <<Ճանապարհային երթևեկության կանոնները և տրանսպորտային միջոցների շահագործումն արգելող անսարքությունների ու պայմանների ցանկը հաստատելու մասին>> 28.06.2007թ. թիվ 955-Ն որոշման 84-րդ կետի 6-րդ ենթակետի համաձայն՝ կանգառն արգելվում է խաչմերուկներում, երթևեկելի մասերի հատման վրա և հատվող երթևեկելի մասի եզրից 5 մ պակաս վայրում՝ բացառությամբ երթևեկելի մասերի եռակողմ հատման հոծ գծով կամ բաժանարար գոտիով առանձնացված կողմի վրա (շարունակություն չունեցող կողմի դիմաց):

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 124-րդ հոդվածի 21-րդ մասի համաձայն՝ տրանսպորտային միջոցների վարորդների կողմից կանգառի և (կամ) կայանման

կանոնները խախտելը՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հնգապատիկի չափով, տուգանային միավորի կիրառում՝ 0.5 միավոր:

Իրավախախտումն ամրագրած տեսանյութը փաստում է, որ <<TOYOTA>> մակնիշի 07VV080 հաշվառման համարանիշի տրանսպորտային միջոցը 26.04.2021թ. ժամը 13:34:40-րդ վայրկյանից 13:35:56-րդ վայրկյանը՝ 76 վայրկյան տևողությամբ տեղակայված է Երևան քաղաքի Մհեր Մկրտչյան - Խորենացի փողոցների խաչմերուկի հատվածում:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ << օրենսգրքի 124-րդ հոդվածի 39-րդ մասի համաձայն՝ սույն հոդվածի 21-րդ և 25-րդ մասերով (միայն կանգառ կատարելու մասով) նախատեսված վարչական իրավախախտումն ունի նվազ նշանակություն այն դեպքում, երբ կանգառը կատարվել է միայն ուղևորների նստելու կամ իջնելու նպատակով, չի գերազանցել մեկ րոպե ժամանակահատվածը, և դրա հետևանքով երթևեկության մյուս մասնակիցների համար խոչընդոտ կամ վթարային իրադրություն առաջացնելու ակնհայտ վտանգ չի ստեղծվել:

Այսպիսով, դիմումատուի արարքում ակնհայտ է Վարչական իրավախախտումների վերաբերյալ << օրենսգրքի 124-րդ հոդվածի 21-րդ մասի զանցակազմը:

Ելնելով վերոգրյալից, ղեկավարվելով Վարչական իրավախախտումների վերաբերյալ << օրենսգրքի 286-րդ հոդվածի 1-ին մասով և 293-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

1. Ճանապարհային ոստիկանության վարչական տույժ նշանակելու մասին 10.05.2021թ. թիվ 2112707036 որոշման հիմքում դրված փաստական հանգամանքների դեմ բերած գանգատը թողնել առանց բավարարման:
2. Հանձնարարել ՃՈ ՏՄՀԻՎԳՔ բաժինին, Հարություն Քախվեջյանի անվամբ կայացնել նոր վարչական ակտ:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հանձնելու օրվան հաջորդող օրը և կարող է բողոքարկվել << վարչական դատարան՝ օրենքով սահմանված կարգով և ժամկետներում:
4. Սույն որոշման օրինակն ուղարկել Հարություն Քախվեջյանին և ՃՈ ՏՄՀԻՎԳՔ բաժին:

Կատարող Կ.Սիարոնյան
Հեռ.՝ 011-544-783



Ե. Կարապետյան
Ե. Կարապետյան